«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

31 Մայիսի 2023, N 7 - 2

ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ԵՎ ԲԻԶՆԵՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Լսելով և քննարկելով Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի դեկանի՝ 2021-2022 ուսումնական տարում և 2022-2023 ուսումնական տարվա առաջին կիսամյակում ֆակուլտետում իրականացված ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2018-2022 թթ. զարգացման ռազմավարությամբ նախատեսված գործողությունների կատարման մասին հաշվետվությունը (զեկուցող՝ մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ն.Մ.Կեսոյան)՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների մասին հաշվետվությունն ընդունել ի գիտություն և կատարվածը գնահատել բավարար:

2. **Ֆակուլտետի դեկանատին՝**
   1) ֆակուլտետի գիտական խորհրդի նիստերում պարբերաբար անդրադառնալ դասաձախողումներին, դրանց կանխարգելման նկատմամբ լինել հետևողական.
   2) թղթային և էլեկտրոնային մատյաններում ուսանողների հաճախումների և ակտիվության գրանցման նկատմամբ հսկողությունն ու մշտադիտարկումները դարձնել առավել պարբերական.
   3) պատշաճ ուշադրություն դարձնել Moodle հարթակում առարկայական մոդուլների կահավորմանը.

4) օժանդակել շարժունության ծրագրերի ակտիվացմանը, ֆակուլտետի միջազգային կապերի ընդլայնմանը.
5) ֆակուլտետի գիտական խորհրդի նիստերում համալսարանի գիտական խորհրդի և ռեկտորատի որոշումների քննարկման ժամանակ վերհանել առկա խնդիրները՝ հետևելով նոր ռազմավարության կատարողականներին. խստապահանջ լինել էթիկայի կանոնների և աշխատանքային կարգապահության պահպանման հարցերում.
6) նպաստել նոր լսարանների կահավորմանը համապատասխան տեխնիկական միջոցներով.
7) կատարելագործել դեկանատի աշխատանքների կատարման որակը, նպաստել աշխատանքների արդյունավետության բարձրացմանը.
8) խստագույնս հետևել յուրաքանչյուր հանձնարարականի կատարման վերջնաժամկետներին, անհրաժեշտության դեպքում դրանք քննարկել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հետ:

3. Ֆակուլտետի կազմի մեջ մտնող ամբիոնի վարիչներին՝

1) համալսարանի ռազմավարական նպատակներից ելնելով հետևողական լինել ֆակուլտետի ամբիոնների ակադեմիական կազմի վերապատրաստման գործընթացին.
2) դեկանատի հետ համատեղ ընդլայնել արտաքին շահառուների հետ փոխգործակցության շրջանակը.
3) աշխատել մագիստրոսական կրթական ծրագրերի զարգացման ուղղությամբ, նորացնել և արդիականացնել առկա կրթական ծրագրերը, նախաձեռնել նոր կրթական ծրագրեր.
4) պարբերական դարձնել ֆակուլտետի գիտական խորհրդի նիստերին գործատուների մասնակցությունը՝ ակտիվորեն պահպանելով հետադարձ կապը նրանց հետ.
5) ակտիվացնել գիտահետազոտական աշխատանքների և ուսումնամեթոդական նոր նյութերի մշակումները.
6) առավել համահունչ դարձնել փորձառությունների ծրագրերը աշխատաշուկայի պահանջներին.
7) խրախուսել լավագույն ուսանողների ներգրավվածությունը միջազգային հետազոտություններում ու փոխանակման ծրագրերում.
8) կուրսղեկների և այլ դասախոսների նեգրավմամբ աշխատանքներ տանել ՈՒԳԸ գործունեության մեջ ուսանողների մասնակցության մակարդակի բարձրացման ուղղությամբ.

9) նպաստել ուսանողների և դասախոսների համատեղ հետազոտությունների իրականացմանը և տարբեր դրամաշնորհային ծրագրերում ներգրավմանը.
10) խրախուսել շնորհալի ուսանողների ստեղծագործական գործունեության հանրայնացումը:

4. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

2023 թ. մայիսի 31
Երևան